Վեհիբ փաշայից ստացվեցին մի քանի հեռագիրներ, որոնք նորից բողոքում էին Թիւրքահպատակների նկատմամբ գործադրուղ բռնութիւնների դէմ և պահանջում էին խիստ պատժի ենթարկել յանցաւորներին: Զօր. Օդիշելիձէն, յունւ. 31–ին և փետրւարի սկզբին, երկու անգամ, պատասխանեց, որ Վեհիբ փաշայի ստացած տեղեկութիւնները խիստ չափազանցւած են, որ, ճիշտ է, Երզնկայի ու Տրապիզոնի շրջաններում տեղի են ունեցել մի քանի բռնութիւններ, բայց նրանք արդիւնք են քրդական հրոսախմբերի յարձակումների և քնաւ չեն համապատասխանում Թիւրք հրամանատարութեան ցոյց տւած չափերին: Ի պատասխան սրան, փետր. 6–ին զօր. Օդիշելիձէն ստացաւ Վեհիբ փաշայից մի նոր հեռագիր, որով Թիւրք հրամանատարը յայտնում էր, թէ ինքը՝ երկու կողմերի համար պատւաւոր հաշտութեան երկրպագու լինելով հանդերձ՝ ստիպւած է, մահմետական բնակչութեան պաշտպանութեան նպատակով, առաջ չարժել իր զօրքերը մինչև ռուս զօրամասի հետ չփման մտնելը:

Ուրիշ խօսքով, վերսկսւում էր պատերազմը:
